ջեսցեն. այլ զկնի աւուրց ինչ զանազան պատճառանօք խնդրէր ընուլ զդահութիւն իւր, որպէս և միւս ազգաց։

Եւ իսպառ ընդդիմանալն Հայոց՝ ետ քակել 'ի գիշերի զքարինս 'ի պարսպէ վանաց Ս. Փրկչի, և 'ի վաղիւ դնաց բազմութեամբ 'ի քննութիւն, հրապուրէր և զԴատաւոր քաղաքին՝ և 'ի չանսալ նորա բանից Քաղաքապետին՝ կոչեաց զՓոխանորդն Հայոց և սպառնայր բառնալ զքարինս 'ի գերեզմանաց եւ հանել զոսկերս մեռելոց. որպէս թէ արտաքս ելեալ իցեն 'ի սեփհական սահմանացն, եւ թէ մերձ 'ի գերեզմանն Բագոսի թաղեալ իցեն զմեռեալս, և առ այս ջանայր գրգռել զսլլազգիս Սիոնի, այլ նոքա վկայեցին թէ այսոքիկ տեղիք 'ի բազում ժամանակաց անտի են 'ի ձեռս ազգին Հայոց վաւերական գրովք, յորմէ եւս չչահեալ ինչ դարձաւ յետս ունայն եւ ամօթալի։ Ապա հրապուրէր միշտ զԴատաւորն լինիլ կուսակից ինքեան 'ի կեղեքել զՀայս, այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, եւ ոչ թողոյր առնուլ ինչ յանիրաւի, մինչեւ անկեալ յիշխանութենէ գնաց յԵրուսաղէմ։

Յետ նորա Իպրահիմ Աղա ոմն եկն 'ի Դամասկոսէ Քաղաքապետ Երուսաղէմի։ Սա զառաջինն պահանջէր 'ի Հայոց 10,000 դահեկան, և յանկանիլ յիշխանութենէ Կուսակալին՝ լռեաց առ ժամն, եւ տեղապահ նորին գրեաց առ սա Իպրահիմ ժողովել զմնացեալ հարկս յԱրաբացւոց, և ընդ նորոգիլ իշխանութեան իւրոյ, գրեաց 'ի վանս Հայոց տալ 12,500 դահեկան իբր փոխ, որոյ զփորձն առեալ գիտէին, թէ փոխն ինչ ունի դառնալ յետոյ։ Հայք ոչ ետուն, եւ աղաչեցին չտալ նեղութիւն վասն այսպիսեաց, զի Արքայն տուեալ էր հրովարտակ՝ գիտելով զաղքատութիւնս նոցա և զնուազութիւն արդեանց։

Զայրացեալ ընդ այս Քաղաքապետին կարգեաց Ոստիկան զոմն 'ի հազարապետաց և խնդրէր 7500 դահեկան։ Եւ Եղիա եպիսկոպոս տարեալ եցոյց զհրովարտակն Արքայի, և յայտ արար զչքաւորութիւն միաբանաց, և եթէ հնար իցէ զ40,000 եւս փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, եւ նորա ոչ անսացեալ, ստիպեաց զՓոխանորդն անպատճառ հատուցանել զդրամն. Եղիա խնդրեաց ժամանակ խորհիլ ընդ Պատրիարքին և ընդ Խորհրդականս։